Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

# Առավոտ

a r a v o t d a i l y

64/4160/ 7 ապրիլի 2012 շաբաթ

ISSN 1829-2224

## Ա

## Երկնագույն արտոնյալները

Ես անեն ինչ հասկանում եմ՝ եվրոպական արժեքներ, հանդուրժողականություն, քաղաքական կոռեկտություն եւ այլն: Ինքս էլ կողմ եմ այդ ամենին: Բայց ես չեմ հասկանում, թե ինչու մեր համաքաղաքացիների հատկապես մի մասին մենք պարտավոր ենք գլխներիս վրա ման տալ եւ չհամարձակվել նրանց հասցեին որեւէ թթու խոսք ասել: Խոսքս, ինչպես հասկանում եք, միասեռականների մասին է: Եթե փողոցի որեւէ խաչմերուկում կանգնած է «սովորական»՝ կին մարմնավաճառ, դուք կարող եք կոպտության այս կամ այն աստիճանով խնդրել նրան այնտեղ չկանգնել՝ ենթադրենք, պատճառաբանելով, որ ձեր երեխային տհաճ է նման գործով զբաղվող մի կնոջ տեսնելը: Բայց եթե նույն խաչմերուկում կանգնած է կնոջ նման քսված եւ կանացի համազգեստ հագած արվամոլ մարմնավաճառը, ձեր ցանկացած դիտողության վերաբերյալ նա այնպիսի վայնասուն կբարձրացնի, որ այն մի քանի ժամից կհասնի Եվրոպայի խորհուրդ, եւ ձեր դժգոհությունը անպայման տեղ կգտնի այդ կազմակերպության տարեկան զեկույցում: Հենց այդ նկատառումից ելնելով է, հավանաբար, քաղաքապետարանի դիմաց կանգնած այդ մասնագիտության ամեն մի միասեռականի անվտանգությունը պաշտպանում 4-5 «կարմիր բերետավոր»: Արգելքները, բնականաբար, տարածվում են նաեւ լրագրության վրա, եւ վստահ եմ, որ իմ այս նշումները նույնպես կարժանանան միասեռականների տարբեր կազմակերպությունների բուռն քննարկմանն ու խիստ դատապարտմանը՝ որպես «հոմոֆոբիական»: Ոչ մի պաշտոնյայի, ոչ մի քաղաքական գործչի եւ ոչ մի օլիգարխի հասցեին քննադատությունը չի արժանանում նման արձագանքի:

Ես մինչեւ վերջ չեմ հասկանում, թե ինչու է այդպես: Բայց փաստը մնում է փաստ. իրենց ճնշվածի, հետապնդվողի դերում ներկայացնողները իրականում շատ հզոր են՝ նրանք թե՛ երկրի ներսում եւ թե՛, մանավանդ, նրա սահմաններից դուրս վայելում են ազդեցիկ մարդկանց հովանավորությունը: Իհարկե, ավանդական կամ ոչ ավանդական կողմնորոշումը ամեն մի մարդու անձնական գործն է, եւ ինչպես այս, այնպես էլ մնացած դեպքերում ոչ ոք իրավունք չունի որոշելու, թե որն է ճիշտը, իսկ որը՝ սխալը: Բայց միասեռականներն այսօր իրենց այնպես են պահում, որ ճիշտը հենց իրենք են եւ հատուկ, նպատակաուղղված ի ցույց են դնում իրենց այդ կողմնորոշումը՝ մասնավորապես փողոցում իրենց նմանների հետ զբաղվելով մարմնավաճառությամբ: Իհարկե, միասեռականների նկատմամբ ագրեսիվ դրսեւորումները դատապարտելի են, բայց նույնքան դատապարտելի է իրենց՝ սոդոմիստների ագրեսիվությունը: Եվ ինչո՞ւ են նրանք կարծում, թե իրենց հակումներն այնքան լավն են, որ բոլորը պետք է նրանց ծափահարեն: Հավանաբար, մեր պետությունը, բազմաթիվ այլ հարցերում խախտելով մարդկանց իրավունքները, որոշել է գոնե այստեղ խնդիրներ չունենալ:

Իսկ գուցե իսկապես գոյություն ունի աշխարհի ճակատագրի վրա ազդող համասեռամոլների միջազգային լիգա:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## Կառավարության ներկա եւ նախկին անդամների հեռակա բանավեճը

«Իհարկե, մեզ հարկավոր է նոր կառավարություն: Եվ շատ կարեւոր է, որ այդ նոր կառավարությունում չլինեն Վ. Օսկանյանի տեսակետները կիսող քաղաքական ուժեր»,- Facebook-ի իր էջում այսպես է արձագանքել ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանը Վարդան Օսկանյանի երեկվա հոդվածին: Նշենք, որ «Իրավիճակի անատոմիան» վերնագրված հոդվածում Վարդան Օսկանյանը գրել է. «Մայիսի 6-ին կայանալիք ընտրությունները միայն խորհրդարանական ընտրություններ չեն, այլեւ՝ կառավարության ընտրություն: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն՝ պատգամավորների մեծամասնությունը ձեւավորում է կառավարությունը: Հետեւապես՝ այս կամ այն կուսակցությանը քվե տալով՝ հասարակությունը ոչ միայն ընտրում է պատգամավորներին, այլեւ վստահում է երկրի կառավարումը կոնկրետ կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի՝ իրական կոալիցիայի համար հիմքեր ձեւավորելով»:





## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### «Լուսանցքից դուրս» հայտնվելը «կատաստրոֆա» չէ

«Այս աշխարհում ամեն ինչ ժամանակավոր է, եւ երբեւիցե դուրս մնալ այս կյանքում ունեցած գործունեություններից՝ ոչ մի կատաստրոֆա չկա դրա մեջ: Ամեն դեպքում, ով քաղաքականության հետ գործ չունի՝ ավելի հանգիստ կյանք ունի: Քաղաքականությունը մարդուց խլում է եւ ժամանակ, եւ նյարդեր, եւ առողջություն: Մեծ հաշվով, քաղաքականության տվածն ու քաղաքականությունից տարածը երբ համադրես, միշտ չէ, որ կոմպենսացվում են»,- «Առավոտի» հարցին՝ մտավախություն չունի՞ «լուսանցքից դուրս» հայտնվելու, ասաց ԲՀԿ-ական պատգամավոր, ԲՀԿ համամասնական ցուցակի 39-րդ հորիզոնականը զբաղեցնող Մխիթար Հարությունյանը՝ միաժամանակ նկատելով, որ քաղաքականությունից դեռ չի հոգնել, քաղաքականությունն էլ համարում է «աբստրակտ արվեստ», որի մեջ հետաքրքրություններ կարելի է գտնել:

Կարդացեք էջ**D**3:

### «Իրականությունը ուրիշ բան է ցուցանում»

Աշոտ Նավասարդյանի կինը երազ էր տեսել, որ Հանրապետական կուսակցությունն է հաղթելու: Aravot.am-ի հետ զրույցում մեր հարցին՝ տիկին Արմինեն նման երազներ չի՞ տեսնում «ժառանգության» մասին՝ կուսակցության առաջնորդ Րաֆֆի Հովհաննիսյանը պատասխանեց՝ ոչ. «Կարծում եմ, որ տիկին Նավասարդյանն իսկապես հարգելի համաքաղաքացի է, ով ժամանակից շուտ մեզ բոլորիս հետ կորցրել է ամուսնուն՝ մի ազգային գործչի, այդ կուսակցության հիմնադրին: Կարծում եմ՝ երազ լինի, թե չէ՝ նա եւս գիտակցում է, որ Աշոտ Նավասարդյանի մարմնավորած արժեքները, իր պատկերացրած կուսակցությունը, Նժդեհի հավատամքն ու այսօրվա իրականությունը քիչ աղերսներ ունեն միմյանց հետ: Եվ կարծում եմ, որ հենց դրա համար նա ամեն ինչն իր երազի մեջ տեսավ, որովհետեւ իրականությունը ուրիշ բան է ցուցանում»:

Կարդացեք նաեւ՝ էջ 2:

Այսուհետեւ թերթի 8-րդ էջում կարող եք կարդալ օրվա հումորը:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Քննարկում

Երկուշաբթի, ժամը 14-ին, «Երեւան» հյուրանոցի «Ռոսինի» սրահում «Սիվիլիթաս» հիմնադրամի հերթական քննարկման հյուրն է Րաֆֆի Հովհաննիսյանը:

### Եղանակ

Երեւան +5 +20, Շիրակ -3 +11, Կոտայք -3 +11, Գեղարքունիք -3 +11, Լոռի 0 +19, Տավուշ +2 +21, Արագածոտն լեռներ -3 +11, Արագածոտն նախալեռն. +3 +19, Արարատ +4 +20, Արմավիր +4 +20, Վայոց Ձոր լեռներ -3 +11, Վայոց Ձոր նախալեռն. -4 +20, Սյունիքի հովիտներ +5 +23, Սյունիքի նախալեռներ +2 +17, Արցախ +4 +21

Ա
aravot daily
ՇԱԲԱԹ 7.04.2012



## ԲՀԿ-ն Սյունիքում «մարտի» է ելնում

ԲՀԿ համամասնական ցուցակի 20-րդ հորիզոնականը զբաղեցնող Տիգրան Ուրիխանյանը նշանակվել է Գորիսի տարածաշրջանում ԲՀԿ կենտրոնական շտաբի համակարգող: «Առավոտի» հարցին՝ մտավախություններ չունի՞ այդ տարածաշրջանում աշխատելու առումով, քանի որ Սյունիքի Հանրապետական մարզպետ Սուրիկ Խաչատրյանը բավականին սկանդալային անձնավորություն է, բռունցքներին ազատություն տվող, օրենքներն առանձնապես չհարգող, ինչի բազում վկայությունները կան: Չի՞ վախենում Տիգրան Ուրիխանյանը նրա հետ առերեսվելուց: «Ուզում եմ ձեզ վստահեցնել, որ այս անգամ Գորիսում տեղի են ունենալու բացարձակ օրինական ընտրություններ: Դրանք անցկացվելու են օրենքի տառին ամբողջությամբ համապատասխանող: Ես, բնականաբար, ապավինում եմ օրենքով սահմանված մեր իրավունքներին, որոնց շրջանակներում էլ անցկացնելու ենք մեր վերահսկողությունը»: Ի գիտություն բոլոր այն անձանց, ովքեր գաղտնի մտադրություններ կունենան այդ տարածաշրջանում ընտրությունները հավուր պատշաճի չկազմակերպելու, Տիգրան Ուրիխանյանն ասում է. «Ես, որպես իրավաբան, եւ իմ ամբողջ բազմամարդ թիմը հսկողություն ենք իրականացնելու: Տեղեկացնեմ նաեւ, որ անկախ դիտորդական առաքելություններից մեկի հետ հանդիպման ժամանակ մեր խնդրանքի հիման վրա պայմանավորվածություն է ձեռք բերվել, եւ մեզ հետ են լինելու նաեւ 9 միջազգային դիտորդներ, որոնք առաջին անգամ այդ տարածաշրջանում անընդմեջ, շուրջօրյա դիտորդական առաքելություն են իրականացնելու»: ԲՀԿ-ի «դեսանտ-խմբում» նաեւ տեղական դիտորդներ կլինեն: Ըստ Տիգրան Ուրիխանյանի՝ իրենք նախապես ճշտելու, զննելու են նաեւ բոլոր ցուցակները: «Չեմ կարծում, որ Հայաստանում որեւէ մեկը օրենքից բարձր իրավասություններ ունի»,- մարզպետի անձի վերաբերյալ «Առավոտի» պնդումներին հակադարձեց ԲՀԿ-ական թեկնածուն՝ հավելելով, որ հույսով է՝ բոլորն են շահագրգիռ այդ տարածքում նորմալ ընտրական գործընթաց ապահովելու, քանի որ ոչ ոքի շահից չեն բխում սկանդալները, էքցեսները եւ իրարանցումները:

Ն. Գ.

## ԱՎՄ-ն էլ պաշտպանեց ՀՀԿ-ին եւ Սերժ Սարգսյանին

Երեկ կառավարության նիստերի դահլիճում տեղի ունեցավ Ազատամարտի վետերանների միության 5-րդ հերթական համագումարը, որի օրակարգում, ինչպես ԱՎՄ նախագահ Համլետ Հովսեփյանը հայտարարեց, առաջիկա խորհրդարանական եւ 2013-ի նախագահական ընտրությունների առնչությամբ այս կազմակերպության դիրքորոշմանն ու անելիքներին վերաբերող հարցն էր:

Իր ելույթում Հովսեփյանը հայտարարեց. «Ուզում ենք հավատալ, որ այն բարքերին ու երեւույթներին, որոնք ձեւավորվել են տարիների ընթացքում եւ չարիք են բերել մեր ժողովրդին, որոնք վտանգում են մեր պետության անվտանգությունը՝ պետք է վերջ տրվի: Հույսով եւ հավատով պետք է առաջ գնանք՝ առանց երկմտելու: Ուզում եմ դիմել մեր համակիրներին՝ եկեք կանգնենք մեր գերագույն գլխավոր հրամանատարի թիկունքին, եւ համոզված եմ՝ հաղթանակը մերն է լինելու: Փոխվելու ենք, որ կարողանանք փոխել»,- ասաց ԱՎՄ նախագահը:

Ավելի ուշ կազմակերպության համագումարը որոշեց առաջիկա խորհրդարանական ընտրություններում պաշտպանել ՀՀԿ-ին, իսկ 2013թ. նախագահական ընտրություններում՝ Սերժ Սարգսյանի թեկնածությունը:

# ՕԵԿ-ը պատրաստ է պայքարին

### Հարցազրույց ՕԵԿ փոխնախագահի Հեղինե Բիշարյանի հետ




- Ինչպե՞ս եք սկսելու քարոզարշավը եւ ինչպե՞ս եք պատկերացնում քարոզարշավի ընթացքը:

- Ապրիլի 7-ին ՕԵԿ-ը պատրաստվում է անցկացնել իր առաջին նախընտրական հանրահավաքը Ազատության հրապարակում, հաջորդ օրը պաշտոնապես կազդարարվի քարոզարշավի մեկնարկը, լրատվամիջոցներին եւ հանրությանը կներկայացնենք կուսակցության նախընտրական ծրագիրը, որից հետո կսկսվի բուն նախընտրական արշավը՝ մարզային հանդիպումների շարքը, ըստ սահմանված ժամանակացույցի: «Օրինաց երկիր» կուսակցությունը շահագրգռված է, որպեսզի նախընտրական քարոզարշավը անցնի քաղաքակիրթ խաղի կանոններով, ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերը ոչ թե ցեխ շպրտեն միմյանց վրա, այլ լինի գաղափարների եւ ծրագրերի պայքար, յուրաքանչյուրը ներկայացնի իր կատարած աշխատանքը եւ տեսլականը, այն ծրագիրը, որով գնում է ընտրության, եւ որի արդյունքում ի վերջո պետք է ստանա հասարակության աջակցությունը: Սա է ընտրություններին մասնակցելու եւ ընտրություններ անցկացնելու միակ քաղաքակիրթ ձեւը:

- Պատրա՞ստ է ՕԵԿ-ը քարոզարշավին եւ ծրագրային ինչպիսի՞ նորարարություններ է առաջարկում հանրությանը:

- Մինչեւ պաշտոնական քարոզարշավի մեկնարկը մենք իրականացրել ենք կազմակերպչական եւ նախապատրաստական հսկայածավալ աշխատանք: Թե կառուցվածքային, թե գաղափարական առումներով ՕԵԿ-ը լիովին պատրաստ է նախընտրական պայքարին: Մենք մշտապես մրցունակ ծրագրեր ենք ներկայացրել հանրությանը եւ հետեւողական ենք եղել դրանց իրականացման հարցում, ինչի շնորհիվ որոշակի ընտրազանգված միշտ մեր կողքին է՝ հավատում եւ վստահում է մեզ: Այս ընտրություններին եւս «Օրինաց երկիր» կուսակցությունը ներկայացնելու է բավականին հավակնոտ ծրագիր, որը ընդգրկելու է մեր հասարակության առջեւ ծառացած բազմաթիվ խնդիրների կարգավորմանը ուղղված մոտեցումներ եւ լուծումներ, որոնք հետագայում անպայման իրականություն կդառնան օրենքների տեսքով: Ավանդաբար ՕԵԿ-ը մեծ ուշադրություն է դարձրել սոցիալական ուղղվածություն ունեցող ծրագրերին, ուստի այս անգամ եւս մեր նախընտրական ծրագրում ծանրակշիռ տեղ կունենան սոցիալական այնպիսի խնդիրներ, որոնք հրատապ լուծում են պահանջում: Ինչպես արդեն նշեցի՝ ապրիլի 8-ին մենք պաշտոնապես կներկայացնենք մեր նախընտրական ծրագիրը հասարակության դատին, եւ համոզված եմ, որ այն կարժանանա հասարակական լայն աջակցության:

- Ինչպե՞ս եք վերաբերվում առաջիկա խորհրդարանական ընտրությունների հանրային վերահսկողության միջկուսակցական միասնական շտաբ ձեւավորելու՝ Դավիթ Հարությունյանի նախաձեռնությանը:

- Անկեղծորեն ուզում եմ խոստովանել, որ առհասարակ ընտրություններում հավասար մրցակցային պայմանների ապահովումը, ընտրական գործընթացի նախապատրաստման եւ անցկացման օրինականության երաշխավորումը մեզ համար մշտապես եղել են առաջնահերթություն: Եվ առաջիկա խորհրդարանական ընտրություններն անմասն չեն դրանից: Ինչպես միշտ, այս անգամ եւս ՕԵԿ նախընտրական շտաբում գործում է աշխատանքային խումբ, որն ուսումնասիրում է ընտրողների ցուցակներում տեղ գտած թերությունները ու անճշտությունները, վեր հանում դրանք, հետեւելու է նախընտրական քարոզչության սահմանված կարգին, ընտրական գործընթացին օրինականության պահպանմանն ու պայքարելու է հնարավոր ընտրախախտումների դեմ: «Օրինաց երկրի» համար երկրում լավ ընտրություններ ունենալը գերխնդիր է, իսկ միասնական շտաբի ձեւավորմանը վերաբերվում եմ դրական՝ զուգահեռաբար կարեւորելով միջկուսակցական շփումներն ու տեղեկատվության փոխանակման անհրաժեշտությունը:

- Վերջին օրերին մամուլում սուր քննադատության է ենթարկվում ՕԵԿ կանանց համագումարում ունեցած Ձեր ելույթը: Ձեր գնահատմամբ՝ ո՞րն է դրա պատճառը:

- Գիտեք, բազմաթիվ առիթներով ես ասել եմ, որ չարախոսությունը, այլոց սեւացնելու հաշվին միավորներ վաստակելը, կեղծարարությունն ու բանսարկությունը դարձել են մեր քաղաքական կյանքի անբաժանելի մասը: Հենց դրանով են առաջնորդվում որոշ քաղաքական ուժեր, իրենց գործիչներ հոչակած ստորաքարշ արարածներ եւ լրատվական «քիլլերներ»: Եվ հենց այդ համատեքստում է պետք գնահատել ՕԵԿ կանանց համագումարում իմ ելույթի չարամիտ մեկնաբանությունները, որոնք կառուցված են միտքն աղճատելու, կոնտեքստից կտրված նախադասություններ առանձնացնելու, դրանց ստոր եւ հեղինակներին վայել մեկնաբանություններ տալու տրամաբանության վրա: Իսկ շարքն ամբողջականացնում են էժանագին գրչակներն իրենց մտացածինը համացանցում տեղադրելով՝ փոխարենն իրենց եւ առատաձեռն պատվիրատուների անմարդանման պատկերները ներկայացնելով: Վերլուծեք վերջին ամիսների մամուլը, եւ ՕԵԿ-ի դեմ քիլլերական հարձակումների ծավալից Ձեզ պարզ կդառնա, թե ինչ ապարդյուն նպատակ են հետապնդում մեր չարակամներն ու պատվեր կատարողները:

ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ

# Րաֆֆի Հովհաննիսյանը ընդդեմ տղամարդկային «մաչոյիզմի»

Այս անգամ ՀԱԿ-ի նկատմամբ «Ժառանգությունը» բարի կամք է դրսեւորում, ուստի Aravot.am-ի հետ զրույցում մենք «Ժառանգության» առաջնորդ Րաֆֆի Հովհաննիսյանից հետաքրքրվեցինք՝ մտավախություն չունե՞ք, որ դա կշփոթեն խեղճության, թուլության հետ: Հատկապես, որ Ստյոպա Սաֆարյանի հետ նույն ընտրատարածքում Ռուբեն Հայրապետյանն է, Արամ Մանուկյանի հետ նույն ընտրատարածքում Զարուհի Փոստանջյանն է, եւ կոչ արվեց «Ժառանգության» անդամների կողմից, որ ասպետական ժեստ անեն, սա չի՞ տանում նրան, որ «Ժառանգությունը» գուցե վստահ չէ իր ուժերին, դրա համար էլ համագործակցության փորձ եք անում՝ նա պատասխանեց. «Չեմ կարծում, ամեն մեկն ունի իր մեկնաբանությունը: Հայաստանյան անցյալից եկող կաղապարային մենթալիտետն ավելի տղամարդկային մաչոյիզմին է ուղղված, բայց ես կարծում եմ, որ մեր ժողովրդի գերակշիռ մեծամասնությունը կտեսնի, որ յուրաքանչյուր բարի կամեցողության, ժպիտի, առանց պայմանականության քննադատողին մոտենալը, ներելը միգուցե ուժի արտահայտություն է, ոչ թե հակառակը: Ուժի նոր սահմանումը մեր ժողովուրդը կտեսնի այս ընտրությունների ժամանակ: Ուժի նոր սահմանման անունը «Ժառանգություն» է: Այդ ուժը գիտի ժեստ անել, բարի կամք դրսեւորել, մարդկանց հարգել, թեկուզ հակադիր տեսակետը ընդունել, քննադատության համար շնորհակալություն հայտնել: Գալիս ենք ժողովրդին տալու այն, ինչ իրեն է պատկանում, ոչ թե այդ մուրաբան, պարարտանյութը, բժշկական հոգատարությունը, դա մեր քաղաքացու իրավունքն է: Դրա համար մենք որ ասում ենք՝ սարեր ենք շուռ տալու, սարեր ենք շուռ տալու առաջին հերթին մեր ժողովրդի ինքնավստահության եւ հավատի մեջ»:

Ինչ վերաբերում է ՀԱԿ-ի հետ մեծամասնական ընտրակարգով միասնական թեկնածուի պաշտպանելու բանակցությունները ձախողելուն, Րաֆֆի Հովհաննիսյանը դեռ հույս ունի, որ «մինչեւ ընտրություններ, թեկուզ ուշացած, մենք կհանգենք այդ փոխադարձ լուծումներին, ըստ որի՝ յուրաքանչյուր ընտրատարածքում կունենանք մեկ ընդդիմադիր թեկնածու, դա լինի ՀՅԴ-ից, ՀԱԿ-ից, «Ժառանգությունից» կամ այլընտրանքային քաղաքացիական առաջադրում: Եթե չեղավ այդպես, ուրեմն կգնանք առաջ, թող ամենաարժանին հաղթի, մենք էլ կշնորհավորենք արժանավորին»:

Պարոն Հովհաննիսյանը նշեց նաեւ, որ իրենք ներքին հարցումներ են արել ու պարզել, որ «Ժառանգությունն» առնվազն երկրորդ տեղում է լինելու խորհրդարանում: Ներքին հարցումներից բացի՝ ունեն նաեւ այլ կազմակերպությունների հարցումների «ոչ պատվիրված» արդյունքները. «Ես քաղաքացիական իմ բնազդով, ժողովրդի հետ շփումով էլ գիտեմ, թե մեր իրական թվերը որոնք էին 5 տարի առաջ: «Ժառանգության» ցուցակը կենտրոնական մրցակիցն է այս ընտրություններում, պարունակում է հզոր էներգիա, ուժականություն: «Ժառանգությունը» մաս է կազմելու խորհրդարանական եւ գործադիր հաջորդ իշխանության: Դրա համար այն հարցերը, որ տրվում են, թե «Ժառանգությունը» ում հետ է պատկերացնում կոալիցիա ստեղծելը՝ պատահական չեն»:

Հ. ՋԵԲԵՋՅԱՆ

Ա aravot daily
ՇԱԲԱԹ 7.04.2012

# Կոտայքի մարզպետին մրցակի՞ց է հայտնվել

## Հրազդանում հետաքրքիր ընտրություններ են սպասվում

Հանրապետության թիվ 25 ընտրատարածքում, որը ներառում է Կոտայքի մարզկենտրոն Հրազդան քաղաքը՝ հարակից գյուղերով, մեծամասնական ընտրակարգով պատգամավորության հինգ թեկնածուներ են առաջադրվել: Մրցակցությունը, սակայն, ընթանալու է երեքի միջեւ՝ ՀԱԿ-ի կողմից առաջադրված Սասուն Միքայելյանի, ՕԵԿ-ի կողմից առաջադրված, ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյանի եւ ԲՀԿ-ի կողմից առաջադրված Դավիթ Քոչարյանի: ՀՀԿ-ն այստեղ իր թեկնածուն չունի: Այս կամ այն թեկնածուին սատարելու ներքին հրահանգ բնակիչներին դեռ չի հասել մարզի ՀՀԿ-ական իշխանություններից: Տեղի բնակիչները ընտրական գործընթացների վերաբերյալ թերահավատ են: Սակայն ասել, որ անտարբերության մթնոլորտ է, սխալ կլիներ, քանի որ, այնուհանդերձ, աշխուժություն եւ ոգեւորություն առկա է: Ուշագրավն այն է, որ մեզ հետ զրուցած քաղաքացիները ոչ թե հակված են իրենց քաղաքացիական կեցվածքով ազդել ընտրությունների արդյունքների վրա, այլ, համենայնդեպս այս պահին, ավելի «թամաշայի» կեցվածք են ընդունել՝ «տեսնենք՝ ով կհաղթի, մի բան կփոխվի՞»: Ի դեպ, առաջինն այստեղ իրենց առատությամբ աչքի են ընկնում ՀՀԿ-ի եւ ԲՀԿ-ի նախընտրական շտաբները: Հետաքրքիր է, որ ԲՀԿ-ն այս ընտրատարածքից իր գործող պատգամավոր Մխիթար Հարությունյանին ներառել է համամասնական ցուցակում՝ 39-րդ հորիզոնականում: Այլ պարագայում անձի փոփոխությունը գուցե նորմալ ընկալվեր: Տվյալ դեպքում ԲՀԿ-ի առաջադրած թեկնածուն Հարությունյանի ազգականն է, վերջինս էլ ակտիվ աշխատանքներ է տանում կուսակցության եւ իր ազգականի համար: ՕԵԿ-ի ու նրա թեկնածուի համար ակտիվորեն գործի է անցել կադաստրի մարզային կառույցի ղեկավարը՝ Դերենիկ Գեւորգյանը: Հիշեցնենք, որ վերջինս իր ծննդավայր Սոլակ գյուղի իր առանձնատանը մատաղ էր արել, երբ պաշտոնապես հաստատվել էր Մանուկ Վարդանյանի առաջադրումը:



Երեկ «Առավոտը» փորձեց ԲՀԿ-ական պատգամավոր Մխիթար Հարությունյանից պարզել՝ այնուհանդերձ, ի՞նչ պատճառով ինքը մեծամասնական ընտրակարգով չառաջադրեց իր թեկնածությունը եւ փորձում է «առաջ տանել» իր ազգականին: Ի պատասխան մեր հարցի՝ պարոն Հարությունյանն ասաց. «Դավիթ Քոչարյանը ցանկացավ առաջադրվել, այդ պատճառով էլ ես չառաջադրվեցի»: Փարատելով մեր զարմանքը՝ Դավիթ Քոչարյանի ցանկությունը Ձեզ համար հի՞մք է, մեր զրուցակիցը հակադարձեց. «Եվ հիմք է, եւ ես շատ ուրախացա, որ Դավիթի մոտ նման ցանկություն առաջացավ: Մենք արդեն մոտ 15 տարի քաղաքական գործունեությամբ զբաղվում ենք թիմով: Իհարկե, մինչեւ 1995-96 թվականները որեւէ կուսակցության չենք անդամակցել: ԲՀԿ-ի Հրազդանի տարածքային կառույցը ձեւավորվել է այդ թիմի հիմքով, եւ բացի Դավիթ Քոչարյանից՝ մենք էլի շատ լավ ակտիվ երիտասարդներ ունենք, ովքեր օժտված են քաղաքական գիտելիքներով, տարբեր ժամանակներում ակտիվ հասարակական գործունեություն են ունեցել: Դավիթ Քոչարյանի ցանկությունը ես ուրախությամբ ընդունել եմ եւ պատրաստ եմ ամբողջությամբ աջակցել նրան՝ դա իրականություն դարձնելու հարցում»: Իրենց ազգական լինելու մասով էլ ասաց, որ դա կապ չունի. «Ես շատ ազգականներ ունեմ, ոչ բոլորն են առաջադրվում պատգամավորության թեկնածու եւ սատարում ստանում: Դավիթ Քոչարյանին սատարելը պայմանավորված է իր պոտենցիալով: Նա լավ պոտենցիալ ունի եւ որպես մարդ, եւ որպես քաղաքական գործիչ, եւ որպես ԱԺ մեծամասնական թեկնածու: Դավիթ Քոչարյանը իրականում հարգված տղա է, եւ դա շատ կարեւոր է: Դա նաեւ պարտավորեցնող է, որ ընտրվելուց հետո իր հարգված տղա լինելու փաստը նա կարողանա պահել, պահպանել»: Մխիթար Հարությունյանից «Առավոտը» հետաքրքրվեց՝ եթե ինքը համամասնական կարգով չհայտնվի խորհրդարանում, գործադիրի ո՞ր օղակում է պատկերացնում իր գործունեությունը. «Մարդն իր կյանքում միսիա ունի կատարելու: Իմ կյանքի ամենամեծ միսիան ես համարում եմ կատարված. Արցախի ազատագրական պայքարին մասնակցելը: Ես մեր հասարակության եւ պետության մեջ միշտ անելիք ունեցել եմ եւ հետագայում նույնպես կունենամ: Քաղաքականությամբ զբաղվել՝ չի նշանակում լինել միայն պատգամավոր: Օրենսդիր աշխատանքը քաղաքական գործունեությամբ զբաղվելու մի ուղղություն է: Ես կշարունակեմ իմ գործունեությունն այնպես, ինչպես ԱԺ պատգամավոր լինելը»: Հիշեցնենք, որ մինչեւ ԱԺ պատգամավոր լինելը Մխիթար Հարությունյանը գործարարությամբ էր զբաղվում՝ Ծաղկաձորի սպորտբազայի տնօրենն էր որոշ ժամանակ, 2007-ի ընտրություններում պարտվեց Սասուն Միքայելյանին, իսկ նրա ձերբակալությունից հետո այդ տարածքից ընտրվեց պատգամավոր: Հետաքրքրվեցինք՝ համապատասխանո՞ւմ են իրականությանը խոսակցությունները, որ ինքը հավակնում է Կոտայքի մարզպետի պաշտոնին, եղել են կուսակցական ղեկավարության հետ նման քննարկումներ: Հարությունյանը հակադարձեց. «Ընդհանրապես, այս կյանքում ցանկությունները որեւէ բան չեն որոշում: Այդ կարգի որոշումներ ես ոչ կայացնում եմ, ոչ էլ նման որոշումների քննարկումներ եմ անցկացրել: Նման խոսակցություն չկա, եւ ես նույնիսկ չեմ հասկանում, թե որտեղից են պտտվում այդ լուրերը: Նման բան չկա, նման որոշում, քննարկում չի եղել, նման ցանկության մասին խոսակցություն չի եղել»:

Հետաքրքրվեցինք, թե ՀԱԿ-ի թեկնածու Սասուն Միքայելյանի հետ ի՞նչ հարաբերությունների մեջ է մեր զրուցակիցը, մանավանդ, որ Հրազդանի քաղաքապետի ընտրություններից հետո խոսակցություններ էին շրջանառվում, որ Հարությունյանը նրան է սատարել, եւ ինչպիսի՞ն է լինելու ներկայիս պայքարի տրամաբանությունը: «Մենք որեւէ մեկի հետ պայքարելու խնդիր մեր առջեւ չենք դրել: Սասուն Միքայելյանի հետ մենք չենք շփվում, բայց ես նորմալ վերաբերմունք ունեմ նրա նկատմամբ, հարգանքով եմ վերաբերվում եւ իրեն, եւ իր քաղաքական գործունեությանը: Քաղաքական հայացքներով մենք միշտ տարբեր ենք եղել: Իսկ Վարդանյան Մանուկին ես անձնապես շատ լավ ճանաչում եմ, շատ հարգում եմ ու նույնիսկ հետը մտերմիկ հարաբերություններ ունեմ: Ես սատարելու եմ Դավիթ Քոչարյանին եւ կարծում եմ, որ նրա հաջողություն ունենալու հնարավորությունները բավականին մեծ են, ոչ թե համեմատության իմաստով, այլ իրականում՝ այնպես, ինչպես որ կա: Հրազդանի, տարածաշրջանի գյուղերի ակտիվ երիտասարդությունը սատարում է Դավիթ Քոչարյանին: Էդ փաստի հետ հաշվի չնստելը մեր խնդիրը չէ»: Ինչ վերաբերում է Հրազդանի քաղաքապետի ընտրություններում Սասուն Միքայելյանի օգտին աշխատելուն, Հարությունյանն ասաց. «Դա իրականությանը չի համապատասխանում: Քաղաքականություն է՝ ում ինչ հարմար է խոսել, խոսում են, ոնց հարմար է ընկալել՝ էդպես ընկալում են: Մենք դրանում ողբերգություն չենք տեսնում: Ես ասել եմ, հիմա էլ կրկնում եմ՝ ԲՀԿ-ն Հրազդանի քաղաքապետի ընտրություններում որեւէ թեկնածուի սատարելու որոշում չուներ: ԲՀԿ-ն կողմ է ազատ եւ արդար ընտրություններին, ազատ մրցակցությանը: Ես անձամբ սատարել եմ Արամ Դանիելյանին՝ մեր անձնական հարաբերությունների հաշվին: Նա իմ ընկերն է, մենք մտերիմ հարաբերություններ ունենք»:

Իսկ ԲՀԿ-ՀՀԿ վերջին հակասությունները ի՞նչ ազդեցություն են ունենալու Հրազդանում՝ առաջիկա ընտրությունների ժամանակ, կա՞ն նկատելի հակասություններ՝ հարցին մեր զրուցակիցն այսպես արձագանքեց. «Մենք հասարակության հետ բավարար չափով աշխատանք կարողացել ենք տանել մշտապես, ոչ միայն ընտրափուլի ժամանակ: Մեր հասարակության հետ մենք լավ հարաբերությունների մեջ ենք եւ այս պահին որեւէ քաղաքական ուժի հետ մրցակցության հարթության մեջ չենք դիտարկում մեր աշխատանքները: Մենք որեւէ մեկի հետ մրցակցության մեջ չենք ընտրարշավի ընթացքում: Մենք ուղղակի ի մի ենք բերում հասարակության այն հատվածը, որը մեր կատարած աշխատանքների, մեր ներկայացրած ծրագրերի եւ անձնական հարաբերությունների հաշվին կարող է քվեարկել ԲՀԿ-ի օգտին»: Նկատեցինք, որ Կոտայքի ՀՀԿ-ական մարզպետը միշտ կարողացել է այդ տարածքից ՀՀԿ-ի համար առավելագույն ձայներ ապահովել, միշտ կարողացել է իր ցանկությունները իրականություն դարձնել, մեր զրուցակիցը մտավախություններ չունի՞, որ չի կարողանա իր կուսակցական ղեկավարությանը տված խոստումները իրականացնել: «Մենք տված խոստումներ չունենք: ԲՀԿ-ն ծրագիր ունի, որը ներկայացնելու է հանրությանը, եւ ունենալու ենք մեր աշխատանքին համապատասխան հասարակության վերաբերմունք: Ի՞նչ կստացվի՝ կերեւա»:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# «Մենք մեր գործը կանենք՝ անկախ ՀԱԿ-ի մասնակցությունից»

Նախօրեին ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Դավիթ Հարությունյանն իր կուսակցության՝ ՀՀԿ-ի անունից ընտրական գործընթացի բոլոր անմիջական մասնակիցներին առաջարկել էր քննարկել ՀՀԿ կողմից «Ընտրությունների պատշաճ անցկացման քաղաքակիրթ մրցակցություն ապահովող կանոնների» նախագիծը: Դավիթ Հարությունյանը նաեւ վստահություն էր հայտնել, թե այդ առաջարկությունը պատշաճ արձագանք կստանա:

Առաջիկա խորհրդարանական ընտրությունների մասնակից ուժերից մեկը՝ Հայ ազգային կոնգրեսը, արդեն հայտարարել է, որ չի միանալու եւ չի ստորագրելու ՀՀԿ-ի նախաձեռնած փաստաթուղթը՝ պարզաբանելով, թե դա ՀՀԿ-ի կողմից ընդամենը «ուշացած փորձ է՝ չեզոքացնելու այն էֆեկտը, որը հասարակության վրա գործեց 4 ուժերի կողմից միասնական շտաբի մասին հայտարարության ստորագրումը», եւ որ ՀԱԿ-ը ՀՀԿ-ի «հանցագործությունները կոծկող ջրի մեջ մասնակցություն չի ունենա»:

Aravot.am-ի հետ զրույցում ՀՀ ԱԺ փոխնախագահի, ՀՀԿ մամուլի խոսնակ Էդուարդ Շարմազանովն ասաց, թե Դավիթ Հարությունյանի բարձրաձայնած փաստաթղթին չմիանալը ոչ թե ՀՀԿ-ի, այլ ՀԱԿ-ի խնդիրն է. «Այն, որ ՀԱԿ-ն իրական քննարկումների չի մասնակցում, այլ փորձում է քաղաքական հնարքների դիմելով դիվիդենդներ շահել՝ իր խնդիրն է: Ես միշտ ասել եմ, որ եթե կան խնդիրներ, իսկ խնդիրներ կան, կարելի է գործ անել՝ մեջք մեջքի տված, համախմբված աշխատել, այլ ոչ թե փորձել դա քաղաքական շոուի վերածել կամ փորձել դրանից քաղաքական դիվիդենդներ շահել»:

Այնուամենայնիվ, կա՞ հույս, որ քաղաքական մյուս ուժերը կարձագանքեն ու կմիանան այդ նախաձեռնությանը: «Մենք հիմա երկու ուղղությամբ ենք աշխատում. նախ՝ ԱԺ նախագահին կից ստեղծել ենք ընտրական գործընթացների եւ «Ընտրական օրենսգրքի» կիրարկման մոնիթորինգային աշխատանքային խումբ, ու անկախ այն բանից, թե ՀԱԿ-ն այդ նախաձեռնությանը միանո՞ւմ է, թե՞ ոչ (արդեն հայտնի է, որ Կոնգրեսը հրաժարվել է մասնակցություն ունենալ նաեւ այդ մարմնի աշխատանքներին-խմբ.)՝ այդ խումբն աշխատելու է»,- հայտարարեց Շարմազանովը՝ հավելելով, թե կան բազմաթիվ հասարակական կառույցներ, կան ընտրություններին մասնակցող այլ, այդ թվում՝ արտախորհրդարանական ուժեր եւս, որոնց ներկայացուցիչները հրավիրվել եւ մասնակցել են խմբի ձեւավորմանն առնչվող քննարկմանը, ու ԱԺ փոխնախագահի ձեւակերպմամբ՝ ով դրան կմասնակցի, կմասնակցի հանուն երկրի ապագայի: «Մենք դա անում ենք գործ անելու եւ ոչ թե շոուի համար»,- եզրափակեց Շարմազանովը: Ըստ նրա՝ ՀԱԿ-ն ընդամենը մեր հասարակության, ընդդիմադիր զանգվածի միայն մի հատվածի շահերը կարող է պաշտպանել, իսկ «ընդհանրապես ոչ ոք իրավունք չունի ողջ ժողովրդի անունից հանդես գալու՝ բացի ՀՀ նախագահից եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսից»:

Ինչ վերաբերում է Դավիթ Հարությունյանի ներկայացրած վարքականոնին, ապա Շարմազանովի մատուցմամբ՝ «մարդը բան է առաջարկել, ու ոմանք էլ կարող են դա վերապահումով ընդունել՝ խնդիր չկա: Չեմ կարծում, թե այնտեղ կար մի կետ, որը չէր կարելի ընդունել»:

Հարցրինք նաեւ՝ այդ փաստաթղթի բովանդակությունը քննարկման, վերամշակման ենթակա՞ է, թե՞ ինչպես կա, այդպես էլ առաջարկվում է ստորագրել: «Երբ մեր գործընկերները կատեգորիկ կերպով «ոչ» են ասում՝ դա վատ է, երբ վերապահումով են «ոչ» ասում՝ արդեն իրենցից է կախված: Մենք միշտ բաց ենք եղել երկխոսության եւ բովանդակային քննարկումների համար, ոչ թե PR-ների»,- եզրափակեց Շարմազանովը:

Ն. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

# ՀՀ կառավարությունը փռացնում է անգամ Եվրոպակա՞ն դատարանին

## Իրացման գոտու բնակիչներին տալիս են բնակարաններ, որոնք արդեն սեփականատերեր ունեն

Կառավարությունը Եվրադատարանում ցույց տալու համար, որ մեր երկրում հարգվում են մարդու իրավունքները, եւ իրենք պատրաստ են հաշտությամբ լուծել իրացման գոտու բնակիչների բողոքը, Եվրոպական դատարանին համոզել է վարույթից հանել այդ բնակիչների գործը, ինչից հետո կառավարությունը նրանց բնակարաններ կտրամադրի: Եվ որպեսզի հարց ու պատասխան այլեւս չծագի իրացման գոտու բնակիչների եւ Եվրադատարանի միջեւ, կառավարությունը տրամադրվելիք բնակարանների վկայականների համարներն էլ է ներկայացրել դատարանին: Սակայն իրացման գոտու բնակիչները չվստահելով կառավարությանը՝ ինքնուրույն հարցում են կատարել եւ պարզել, որ այդ բնակարաններն արդեն սեփականատերեր ունեն:

«Առավոտի» հետ զրույցում օտարման գոտու բնակիչ Սեդրակ Բաղդասարյանն ասաց, որ Եվրադատարանում ՀՀ կառավարության ներկայացուցիչը՝ ներկայիս զինդատախազ Գեւորգ Կոստանյանը, Եվրադատարանին խոստացել էր բնակարաններով փոխհատուցում տալ բնակիչներին եւ ներկայացրել Ամիրյան 4/6-ի 31, 40, 63 բնակարանների տվյալները: Սեդրակ Բաղդասարյանի խոսքերով՝ «Այն ժամանակ մենք առարկեցինք եւ Եվրադատարանին տեղեկացրինք, որ այդ բնակարաններն արդեն վաճառված են, Եվրադատարանը մեզ պատասխանեց՝ ձեր կառավարությունը պարտավորվում է 3 ամսվա ընթացքում քաղաքացիներ Բաղդասարյանին, Ղասաբյանին եւ Ղազարյանին տրամադրել նշված բնակարանները: Այսինքն՝ Եվրադատարանը վստահել է մեր կառավարությանը»: Սակայն օրերս անշարժ գույքի պետական կադաստրից Սեդրակ Բաղդասարյանը գրավոր տեղեկանք է ստացել, որը հաստատում է, որ այն բնակարանները, որոնք պարոն Կոստանյանը Եվրադատարանին վստահեցրել էր, թե տրամադրվելու են հայցվոր բնակիչներին, սեփականության իրավունքով պատկանում են այլ անձանց: Ամիրյան 4/6 31 բնակարանը, որը պետք է հատկացվեր Սեդրակ Բաղդասարյանին, ըստ կադաստրի փաստաթղթի՝ սեփականության իրավունքով պատկանում է «Գոհար» ՓԲԸ-ին: Իսկ նույն հասցեի 40 բնակարանը, որն էլ խոստացվել էր Լեւոն Ղազարյանին, կադաստրի վկայականով պատկանում է Զարուհի Նալբանդյանին: Իրացման գոտու մեկ այլ բնակիչ՝ Գրիշա Ղարիբյանին խոստացած թիվ 63 բնակարանը սեփականության իրավունքով գրանցված է Գենրիխ Բալյանի անունով:



«Ստացվում է՝ ՀՀ կառավարությունը եվրակառույցի առջեւ ստանձնած իր պարտականությունները՝ բացի այն, որ չի կատարում, նույնիսկ «մուտիլովկաներ» է անում: Սա պատիվ չի բերում մեր երկրին, հատկապես, որ մենք լուրջ խնդիրներ ունենք միջազգային մակարդակով՝ ղարաբաղյան հակամարտությունը, Մարտի 1-ը եւ այլն: Ախր, սա տեղական ինչ-որ պարտք ու պահանջի խնդիր չէ, որ տենց ստով փակեն գնա»:

Սեդրակ Բաղդասարյանի վստահեցմամբ՝ կրկին դիմելու են Եվրադատարան՝ նոր փաստեր տրամադրելով եւ պահանջելով վերջնական վճիռ կայացնել. «Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արդեն հաստատել է, որ մեր կառավարությունը խախտել է մարդու իրավունքները: Այն, որ 18 տարի առաջ մեզ զրկեցին մեր բնակարաններից՝ իբր թե պետական կարիքների համար, ու հիմա մի քանի կառուցապատողներ ձերբակալված են, քանի որ մարդկանցից գումարներ են վերցրել ու «թռել», ստացվում է՝ մեր հողերը իրացրել են ոչ թե պետական կարիքների համար, այլ հանցագործների շահերի ու կարիքների համար»:

Այս նախընտրական շրջանում իրացման գոտու մի շարք բնակիչներ զրկված են նույնիսկ ընտրելու իրավունքից: Պարոն Բաղդասարյանի խոսքերով՝ իրենց միակողմանի հանել են գրանցումից, ու այսօր ընտրացուցակներից նրանց անունները բացակայում են. «Ես վստահ եմ, որ մեր փոխարեն այլ մարդիկ կքվեարկեն՝ իշխանության ներկայացուցիչների օգտին»:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

# Ընտրողների թվին ՀՀԿ-ականն էլ է կասկածում

## Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար Բորիս Ալեքսանովի խոսքերով՝ Գյումրիում, որտեղ մեկը մյուսին «հոյակապ են ճանաչում», ցուցակների ուռճացված լինել-չլինելը կարելի է պարզել մի շաբաթվա ընթացքում:

Հանրապետության ամենաընչազուրկ ու արտագաղթի ամենամեծ տեմպերն ունեցող Շիրակի մարզում ընտրողների թիվը պաշտոնապես ավելացել է 13 600-ով, իսկ Գյումրիում՝ 6 000-ով: Բնականաբար, այս տվյալները գյումրեցիները որպես հումոր են ընդունում՝ հիշեցնելով, որ իրենց քաղաքը այն եզակի տեղանքներից է, որտեղ գաղտնիքներ չկան, հասարակությունն անգիր գիտի՝ ով ինչպես է ապրում, ինչով է շնչում, ինչու է երկրից հեռանում ու ուր է գնում:

«Առավոտը» Գյումրիում ՀՀԿ-ի հիմնադիրներից մեկից՝ Բորիս Ալեքսանովից հետաքրքրվեց, թե հավատո՞ւմ է արդյոք այս թվերին, եւ մի՞թե դժվար է Շիրակի մարզի մի բուռ ժողովուրդ ունեցող գյուղերում կամ հենց Գյումրու պես փոքր քաղաքում ապացուցել, որ նման ընտրազանգված չկա: «13 հազար թիվը ինձ էլ ինչ-որ տեղ կասկածի տեղիք տվեց, իհարկե՝ սա հիմնավոր չէ, ինչ որ ես ասում եմ, բայց բոլոր դեպքերում իմացեք, որ ընտրացուցակները միայն Հանրապետական կուսակցության խնդիրը չեն: Եթե կա նման արատավոր երեւույթ, կամ ինձ իրավունք վերապահեմ ու ասեմ, եթե կան նման կեղծիքներ, ապա այդ հարցի պարզաբանմանը, ճշգրտմանը կարող են մասնակցել բոլոր քաղաքական ուժերն ու հ/կ-ները, բոլոր շահագրգիռ մարդիկ եւ հանգիստ, մի շաբաթվա մեջ կարող են ապացուցել, թե իրոք նման ուռճացրած թիվ մենք ունե՞նք, թե՞ չունենք: Որովհետեւ, եթե մարդու անուն-ազգանունը ինչ-որ մի հասցեում է գրված, իսկ ինչ-որ մի հասցեն ունի նաեւ իր կողքի հասցեները, եւ կարելի է իմանալ՝ կողքի հասցեն, որտեղ այդ մարդիկ գրանցված են՝ կա՞ն, թե՞ չկան»: Մեր զրուցակցի ասելով՝ դա առավել եւս հեշտ է պարզել Գյումրու պես քաղաքում, որտեղ մեկը մյուսին «հոյակապ է ճանաչում»: Մենք քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարից նաեւ հետաքրքրվեցինք, թե որպես Գյումրիում ապրող քաղաքացի՝ գո՞հ է իր կյանքից. անցած 5 տարիների ընթացքում մի դրական տեղաշարժ նկատե՞լ է, որ հիմա ուզում է մարդիկ ձայն տան ՀՀԿ-ին: «Քանի դեռ փողոցով անցնելիս տեսնում եմ, որ մարդիկ աղբարկղերի մեջ ինչ-որ բան են ման գալիս, ես չեմ կարող գոհ լինել: Երկրի նախագահն էլ հարյուր անգամ ասել է՝ չնայած այն ձեռքբերումներին, որ մենք ունեցել ենք այս տարիների ընթացքում, սա ինձ չի բավարարում, որովհետեւ մենք ունենք մարդիկ, որոնք շատ լուրջ սոցիալական խնդիր ունեն: Ես ընդամենը կարող եմ ասել, որ մենք թունելի վերջում լույսը տեսնում ենք եւ կհասնենք դրան: Անշուշտ, պիտի հավատանք, որ փոխենք, եւ կփոխենք»: Մեր դիտարկմանը, թե «Ժառանգության» պատգամավորներից մեկն առաջարկում է «Փոխվեք, որ հավատանք», ավելի տրամաբանական առաջարկ չէ՞, պարոն Ալեքսանովն ասաց. «Նայած, թե ով ինչ մտադրություն ունի: Մի հատ քաղաքական գործիչ էլ կա, խոսքիս համար թող ների բոլորը՝ աբիժնիկ կեցվածքով, ասում է՝ այ մարդ, գնացեք, հերիք չէ՞ մնացել եք: Չհասկացա, մենք գնանք, որ դու գա՛ս, մենք որ գնանք, դու որ գաս, էս հանրապետությունը երեւի գլխի վրա շուռ տաս: Ես ինքս էլ սոցիալական լուրջ խնդիրներ ունեմ՝ իմ էսքան աշխատանքային տարիներին ու ավանդին, որ կատարել եմ Գյումրիում, թող տպավորություն չստեղծվի, եթե ես աշխատասենյակ եմ զբաղեցնում, ապահովված եմ ամեն ինչով: Մենք խնդիրներ շատ ունենք, բայց հարկավոր է ոչ թե ամեն օր խավարի մասին խոսել, այլ հարկավոր է օրական ընդամենը մեկ մոմ վառել»:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

### Չվերթներն ուշացել են, ոչ ոք չգիտի՞ ինչու

Երեկ 3-4 ժամով ուշացել են «Արմավիա» ավիաընկերության Մոսկվայի եւ Նովոսիբիրսկի չվերթները: «Առավոտի» հարցին ի պատասխան՝ «Արմավիա» ավիաընկերությունից պատասխանեցին, որ իրենք օդանավակայանի հետ ոչ մի խնդիր չունեն եւ կուտակված պարտքի վճարումները պարտաճանաչ կատարում են՝ ինչպես որ պայմանավորվել են խորհուրդ տվեցին դիմել օդանավակայանին՝ պարզելու համար պատճառները: Իսկ օդանավակայանից էլ ճիշտ հակառակը՝ խորհուրդ տվեցին դիմել «Արմավիային», ասելով որ միայն նրանք կարող են ասել, թե իրենց չվերթներն ինչ պատճառով են հետաձգվել կամ ուշացել:

### Չարագործները չարտոնված զանգեր են կատարում

«ԱրմենՏել» ընկերությունը տեղեկացնում է ֆիքսված հեռախոսակապի կորպորատիվ հաճախորդներին, որ վերջին շրջանում նկատվում են Asterisk համակարգի վրա աշխատող ծրագրային հեռախոսային կայանները չարագործների կողմից կոտրելու ու չարտոնված զանգեր կատարելու դեպքեր: Նման միջամտություններով չարագործները կատարում են զանգեր՝ միջազգային տարբեր ուղղություններով: Արդյունքում հաճախորդները ստիպված են վճարել իրենց կողմից չկատարած զանգերի դիմաց: Ընկերությունը կոչ է անում Asterisk համակարգի վրա աշխատող ծրագրային հեռախոսային կայաններն օգտագործող հաճախորդներին կատարել կարգավորումներ՝ չարտոնված զանգերից խուսափելու համար: Համապատասխան հրահանգները տեղադրված են «ԱրմենՏել» ընկերության պաշտոնական կայքի՝ safe.beeline.am էջում: Ընկերությունը հորդորում է իր հաճախորդներին կասկածելի ուղղություններով զանգեր հայտնա-

# «Մաքուր ջուրը» ՏՄՊՊՀ-ին դատի է տալիս

«ՄԳԱ Վոթըր» ընկերությունը, որը սպառողներին հայտնի է «Մաքուր ջուր» ապրանքանիշով, դատարանում կբողոքարկի Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի որոշումը: Հանձնաժողովը «ՄԳԱ Վոթըր»-ին մեղադրել էր անբարեխիղճ մրցակցության եւ սպառողներին մոլորեցնելու մեջ: Ըստ տնտեսվարողի տարածած հաղորդագրության՝ իրենց ընկերությունը 9 տարի է՝ շշալցնում է Գառնիի աղբյուրների ջուրը, որը խողովակի միջով հոսում է արտադրամաս. «Ընկերությունը երբեք սպառողներից չի թաքցրել «Մաքուր ջրի» հումքային ծագումը եւ հետեւողականորեն պատշաճ տեղեկատվություն է տրամադրել: Նշենք, որ ընկերությունը հարցով դիմել է Ստանդարտների ազգային ինստիտուտ, որից ստացել է պաշտոնական պատասխան առ այն, որ Հայաստանում գործող եւ ոչ մի օրենքում չկա «բնական աղբյուրի խմելու ջուր» հասկացության կոնկրետ ամրագրում: Հետեւաբար նման պարագայում հանձնաժողովի կողմից այս բառակապակցության վիճարկումը չունի հիմքեր, այլ միայն հիմնված է անդամների տրամաբանության վրա: Հանձնաժողովը «ՄԳԱ Վոթըր» ընկերության մասին իր ձեւակերպումներում գործածել էր «ստվերային դաշտում» աշխատող, «պետությանը խոշոր չափի վնաս հասցնող», «սպառողների իրավունքները ոտնահարող» եւ այլ արտահայտություններ, որոնք, ընկերության ղեկավարության համոզմամբ, անհիմն են»:

«ՄԳԱ Վոթըր» ընկերության փոխտնօրեն Հակոբ Մաթոսյանի խոսքերով. «Ունենալով ոչ բավարար տեղեկատվություն ջրի մաքրման եւ շշալցման տեխնոլոգիական գործընթացի մասին, ՏՄՊՊՀ մասնագետները եկել են անհիմն եզրահանգման՝ ենթադրելով, որ «ՄԳԱ Վոթըր» ընկերության գործունեության տնտեսության մի մասը ստվերում է: Այսպիսով, նրանք ոչ միայն հանրության աչքերում վարկաբեկում են ընկերությանը, այլեւ կասկածի տակ են դնում հարկային մարմինների աշխատանքը, որոնք պարբերաբար ստուգումներ են անցկացրել ընկերությունում եւ նման խախտումներ չեն հայտնաբերել: Հատկանշական մեկ փաստ. հանձնաժողովի մասնագետները նույնիսկ հարկ չեն համարել այցելել ընկերության արտադրամաս, չեն ծանոթացել շշալցման բուն գործընթացին, միայն հիմնվել են մրցակից կազմակերպության բողոքի վրա: Հետեւաբար զարմանք է հարուցում պետական ծառայողների նման անփույթ վարքագիծը, առավել եւս՝ նրանց արած անհիմն եւ անպատասխանատու հայտարարությունները: Նման պահվածքով հենց իրենք են խոշոր չափի վնաս հասցնում պետությանը. պահելով մրցակից ընկերության կողմը՝ կատարում են իրենց գործառույթին հակառակ գործառույթ՝ ստեղծելով անհավասար մրցակցային պայմաններ, նպաստելով տնտեսական դաշտում մենաշնորհային դիրքի առաջացմանը: Եվ, վերջապես, լինելով պետական հանձնաժողով՝ այս կառույցը շահագրգիռ չէ պետության միջազգային վարկանիշի եւ ներդրումային ֆոնի պահպանման գործում»:

Առավոտ
aravot daily
ՇԱԲԱԹ 7.04.2012

# Չցանկացան տեղափոխել դիակը

## Վերահուղարկավորման հայցով դիմել է դատարան

2010թ. հուլիսից Աշոտ Չիթիրյանը չի կարողանում հանել տալ հոր գերեզմանից մեկ այլ հանգուցյալի դիակ, որը գերեզմանատան տնօրինության «բարի» կամքով հանգրվանել է այս նույն գերեզմանում:

2010թ. հուլիսից սկսած՝ «Առավոտն» անդրադարձել է «Արին Բերդ» գերեզմանատանը տեղի ունեցած գերեզմանապղծության արգահատելի դեպքին, այս կապակցությամբ ոստիկանության Էրեբունու բաժնում հարուցված քրեական գործի նախաքննությանն ու դրա ընթացքին:

2010թ. հուլիսի 12-ին Աշոտ Չիթիրյանը քրոջ հետ այցելեց հոր գերեզմանը, տեսնելով՝ գերեզմանն անարգված է մեկ այլ մարմարե հուշաքարով, տապանաքարով, նույն տեղում ամփոփվել էր մեկ այլ հանգուցյալ: Չգիտեմ, թե ինչ զգացողություն եւ ինչ ապրում կարող է ունենալ հարազատին կորցրած ընտանիքը, երբ նման բանի ականատես լինի:

Ա. Չիթիրյանը մի քանի օր հետո դիմում է «Բնակչության հատուկ սպասարկում» կազմակերպության տնօրեն Վարդան Սուքիասյանին, որը հաստատում է, որ, այո, 2009թ.-ին այնտեղ հուղարկավորվել է մեկ այլ հանգուցյալ՝ Գ. Խ.-ն:

Գերեզմանապղծության եւ իրենց գերեզմանատեղին այլ քաղաքացիների տրամադրելու համար Ա. Չիթիրյանը հաղորդում տվեց ոստիկանության Էրեբունու բաժին: Բաժին ներկայացվեց այն վկայականը, համաձայն որի՝ նշյալ տարածքը 1991թ. օգոստոսի 5-ին տրամադրվել էր Հովհաննես Չիթիրյանին հուղարկավորելու համար:



Հարուցվեց քրեական գործ:

Էրեբունու ոստիկանների հետ «Առավոտը» 2010թ. հոկտեմբերի 27-ին մասնակցեց գերեզմանի բացմանը, մենք նկարահանեցինք այն բոլոր պահերը, երբ պարզվեց, որ նշված գերեզմանում երկու տարբեր հանգուցյալներ կան:

Գործը հետագայում տեղափոխվեց ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության հատկապես կարեւորագույն գործերով ավագ քննիչ Հովհաննես Գեւորգյանի վարույթ, որն էլ ողջ ամառ «Առավոտին» հավատացնում էր, թե շոգերն անցնելուն պես դիակը կտեղափոխվի:



Սակայն անցյալ տարվա դեկտեմբերի 26-ին ավագ քննիչը կարճեց քրեական գործի վարույթը, դադարեցրեց քրեական հետապնդումը գերեզմանատան տնօրինության եւ աշխատակիցների նկատմամբ՝ հանցակազմի բացակայության հիմքով: Քրեական օրենսգրքում կա «առեւտրային կաշառքի հանցակազմ» բառակապակցությունը, այն հանցակազմը, որը չտեսավ, ավաղ, ոստիկանությունը:

Ոստիկանությունն ըստ էության հաստատեց մի բան. հանցագործության մասին իրեն ուղղված որեւէ հաղորդում անիմաստ է, քանի որ քաղաքացին կարող էր ինքնագործունեությամբ կարգավորել իր այդ հարցը, թեկուզ այն կոչվեր հանցագործություն: Աշոտ Չիթիրյանը հաղորդեց, որ պղծել են իր հոր գերեզմանը: Ոստիկանությունը հաստատեց այդ, բայց ոչինչ չձեռնարկեց: Աշոտ Չիթիրյանն իր հոր գերեզմանի պղծման համար հակառակ ձեւով չվարվեց:

Նա դիմել է Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ պահանջելով անծանոթ հանգուցյալի քրոջից եւ թաղման բյուրոյից վերահուղարկավորել Գ.Խ.-ին, ազատել հոր՝ Հովհաննես Չիթիրյանի գերեզմանը: Աշոտ Չիթիրյանի ներկայացուցիչն է ՀՀ փաստաբանների պալատի անդամ Գեւորգ Շիրինյանը:

Մայիսի 3-ին դատավոր Վ. Ասլանյանի կողմից նշանակվել է անդրանիկ դատական նիստը: «Անհերքելի ապացույցների առկայության դեպքում էլ՝ որպես սխալի գիտակցում եւ բարի կամքի դրսեւորում, հանգուցյալի հարազատները չեն ցանկանում տեղափոխել իրենց հարազատի դիակը, պնդելով, թե պահանջում են դատարանի որոշում, ասելով՝ հուշաքար են տեղադրել, իսկ ներողություն խնդրել իմ տառապանքների համար՝ այդպես էլ հարկ չհամարեցին»,- ասում է Աշոտ Չիթիրյանը:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

# Վարդագույն էֆեկտը բավարար էր, որ նյութը դիտվեր մարիխուանա



Երեւանի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում, դատավոր Արթուր Մկրտչյանի նախագահությամբ, շարունակվում է Սերյոժա Վարդանյանի, Հրաչյա Արեւշատյանի, Էդգար Ղարսոյանի դեմ հարուցված քրեական գործի դատաքննությունը:

Ս. Վարդանյանը մեղադրվում է Քրեական օրենսգրքի 266 հոդվածի 1-ին մասի՝ իրացնելու նպատակով մարիխուանա տեսակի թմրամիջոց ձեռք բերելու համար:

Ս. Վարդանյանի պաշտպանն է ՀՀ փաստաբանների պալատի անդամ Էդվարդ Չինարյանը: Ըստ պաշտպանի, Վարդանյանի մեղադրանքի հիմքում դրվել է անցյալ տարվա օգոստոսի 13-ի ՀՀ ոստիկանության փորձագիտական վարչության դատաքիմիական եւ դատաբուսաբանական փորձաքննության եզրակացությունը: Վարդանյանն իրականում օգտագործելիս է եղել կանեփ, երբ նրան ոստիկանները «պատահաբար» հայտնաբերել են: Քանակը եղել է 1, 47 գրամ, ինչը ենթադրում էր պատասխանատվություն: Մինչդեռ նրան մեղադրել են մինչեւ 3 գրամ մարիխուանա տեսակի թմրամիջոցի ձեռքբերման մեջ, ինչը Քրեական օրենսգրքով ավելի բարձր պատիժ է ենթադրում՝ մինչեւ 6 տարվա ազատազրկման տեսքով:

Ս. Վարդանյանը՝ որպես կասկածյալ, ոստիկանության բաժին է տարվել, սակայն, ըստ պաշտպանի, նա չի օգտվել կասկածյալի իրավունքներից, չի տեղեկացվել դատաքիմիական փորձաքննություն նշանակելու որոշման մասին:

Փորձագետ Ա. Սարգսյանը պաշտպանի միջնորդությամբ ներկայացել է դատարան: «Փորձագետը միաժամանակ հայտնեց, որ իր կողմից փորձաքննությունը կատարվել է հին, սովետական, 20-30 տարվա վաղեմություն ունեցող մեթոդներով, որն իրենից չի պահանջում որոշել տիտրահիդրոկանաբինոլի քանակությունը նյութի մեջ»,- ասում է փաստաբան Է. Չինարյանը:

Փորձագետը հակասական ցուցմունք էր տվել. մի դեպքում ասել էր, թե թմրանյութի նկատմամբ բարակշերտ խրոմոտոգրաֆով փորձաքննություն կատարելիս արդյունքի հանդեպ գունավոր էֆեկտ չի ստացվում, իսկ դատարանում քիչ հետո պատասխանելով պաշտպանության կողմի հարցին՝ հայտնել էր, թե իրեն բավարար է, որ նա հետազոտման արդյունքում վարդագույն էֆեկտ է ստացել, որը ապացուցում է, թե նյութը մարիխուանա է:

Ի դեպ, գործում դրված է երկու փաթեթ. կանեփանման զանգվածը, որը առգրավվել է խուզարկության ժամանակ, եւ Արգամ Շառոյանի «Մերսեդես Բենց C-180» ավտոմեքենայի նստելատեղիի տակից առգրավված 1,9 գրամանոց դեղնականաչավուն նյութը:

Պաշտպանական կողմի կարծիքով, չի կարող այս ապացույցը, որի ծագումը, ձեռքբերման աղբյուրն անհայտ է, դրվել մեղադրանքի եւ դատական ակտի կայացման հիմքում, քանի որ այն վերաբերելի չէ այս քրեական գործին:

Փաստաբան Է. Չինարյանը միջնորդեց ոչ միայն անթույլատրելի ճանաչել փորձաքննության եզրակացությունը, այլ՝ կրկնակի դատաքիմիական եւ դատաբուսաբանական փորձաքննություն նշանակել:

Փաստաբանը գտնում է, որ փորձագետը պարտավոր էր նշված եզրակացության մեջ նշել այն գրականությունը եւ մեթոդիկան, որից օգտվել է, քանի որ այն գրականությունը, որից օգտվել է փորձագետը, կանեփի նյութի չորացման մասին էր:

Այսինքն՝ հայտնաբերված նյութի մասսան չի կարող թմրանյութի ձեռքբերման, պահելու եւ շրջանառության քրեաիրավական գնահատման չափանիշ հանդիսանալ:

Ռ. Մ.

## Մարաղային նվիրված

«Ընդդեմ իրավական կամայականության» հասարակական կազմակերպությունը ապրիլի 10-ին հրավիրում է մասնակցելու «Մարաղա-20 տարի անց» խորագրով ԼՂՀ Մարաղա գյուղում Ադրբեջանի կողմից իրականացված ցեղասպանության քսանամյակի տարելիցին նվիրված միջոցառմանը: Միջոցառումը տեղի կունենա «Կոնգրես» հյուրանոցի «Պիկասո» դահլիճում՝ ժամը 12.00-14.00-ը:

## Ադրբեջանցիների ոտնձգությունների պատճառով չեն կարողանում հողերը մշակել

Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանի սահմանամերձ Բերդավան գյուղի բնակիչներին, ովքեր սահմանին մոտ սեփականաշնորհված հողեր ունեն, հրավիրել են գյուղապետարան եւ պատվիրել ձեռնպահ մնալ իրենց հողամասերում աշխատելուց: Պատճառը երկյուղն է ադրբեջանական զինուժի ոտնձգություններից: Մինչդեռ հիմա գյուղատնտեսական աշխատանքների եռուն շրջանն է: Բերդավանի սահմանամերձ տարածքներում խաղողի այգիներ եւ վարելահողեր են: Բերդավանցիները «Առավոտի» թղթակցին ասացին, որ ադրբեջանցիների ոտնձգությունների պատճառով տարիներով անմշակ են մնացել «Ղաղրմա» տեղամասի խաղողի այգիները եւ վարելահողերը: Բերդավանի գյուղապետ Արարատ Գաբրիելյանը հրաժարվեց խնդրի վերաբերյալ տեղեկատվություն տալ: Հիշեցնեմ, որ մարտի 19-ին Բերդավանի պաշտպանական դիրքերում ադրբեջանցի դիպուկահարի կրակոցից զոհվեց գումարտակի հրամանատար, մայոր Արտակ Շահբազյանը:

## 69-ամյա կնոջը բռնաբարելու փորձ կատարած 25-ամյա երիտասարդը մեղսունակ է ճանաչվել

2011թ. հոկտեմբերի 31-ին Իջեւանում 69-ամյա Սուսաննա Բեկնազարյանի նկատմամբ բռնաբարության փորձ կատարած 25-ամյա Վազգեն Օհանյանի նկատմամբ քրեական գործ էր հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-138 հոդվածի 1-ին մասով (բռնաբարության փորձ) եւ 147 հոդվածի 1-ին մասով (բնակարանի անձեռնմխելիության խախտում): Վ. Օհանյանը ձերբակալված է: Նա նախկինում գողության համար դատապարտվել է եւ 2 տարի 3 ամիս անցկացրել ազատազրկման վայրում: Տավուշի մարզի դատախազությունից տեղեկացա, որ նշանակված դատահոգեբուժական փորձաքննության արդյունքում Վազգեն Օհանյանը մեղսունակ է ճանաչվել: Առաջիկայում քրեական գործը կուղարկվի Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան:

ՌՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# Օպերան փոխում է իր «հասցեն»

## Ներկայացումները կկայանան այլ թատրոններում

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի բեմում իրականացվելիք հիմնանորոգման աշխատանքները լուրջ տագնապներ եւ անհանգստություն են առաջացրել թատերասեր հասարակության շրջանում: Մի մասը խոսում է, որ հասկանալի պատճառով ստեղծագործական աշխատանքները երկար ժամանակ կարող են կասեցվել, մի մասն էլ շհիմնավորված է համարում նորոգման անհրաժեշտությունը, փաստելով, թե 2002-ին հիշյալ մշակութային օջախում արդեն իրականացվել են մեծածավալ նորոգման աշխատանքներ:

«Առավոտն» այս մասին մեկնաբանություն խնդրեց թատրոնի տնօրեն Կամո Հովհաննիսյանից:

«2002թ. «Լինսի» հիմնադրամի միջոցներով մեզ մոտ իրականացված վերանորոգման աշխատանքները չէին ընդգրկում ողջ թատրոնը՝ շենքային եւ տեխնիկական առումներով: Դա, փաստորեն, մասնակի վերանորոգում էր, մանավանդ՝ բեմի հետ կապված իրականացվեց ընդամենը կոսմետիկ «միջամտություն», իսկ ավելի քան 30 տարի անընդհատ շահագործվող արդեն հնաոճ բեմի մեխանիզմները իրենց օգտագործման պիտանելիությունը հասցրել էին զրոյի: Ռեժիսորներն ու նկարիչները հաճախ բեմադրություններ իրականացնելիս պարզապես հարմարվում էին եղած պայմաններին»,- ասաց պարոն Հովհաննիսյանը:



Մեր զրուցակիցը հայտնեց, որ մասնագետները բեմի սարքավորումները քարե դարի էին անվանում: Այս բոլորին գումարվել էր նաեւ ամենօրյա վտանգը, թե մի օր արգելափակման տեխնիկան չենթարկվելով, հնարավոր էր՝ զոհերի պատճառ դառնար:

Կամո Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ երկրի համար ֆինանսական դժվար կացությանը զուգահեռ, կառավարությունը ընդառաջ է գնացել թատրոնի ղեկավարության՝ բեմի ժամանակակից տեխնիկական հագեցման խնդրանքին: Տնօրենը հայտնեց, որ այդ խնդրով կառավարության հետ իրենք քննարկում են անցկացրել 3-4 տարի առաջ, ինչի արդյունքում աշխարհում ճանաչված, տասնամյակների փորձ ունեցող ավստրիական Waagner biro-ի մասնագետները Ազգային օպերային թատրոնում կատարել են ուսումնասիրություններ եւ արել համապատասխան եզրակացություն: Վերջերս էլ ավստրիական կազմակերպությունը պայմանագիր ստորագրեց ՀՀ մշակույթի նախարարի հետ, աշխատանքներն էլ կսկսվեն մայիսից:

Ինչ վերաբերում է շրջանառվող խոսակցություններին, թե մինչեւ տարեվերջ միայն կավարտվի թատրոնի բեմի տեխնիկական վերազինումը, պարոն Հովհաննիսյանն ասաց. «Աշխատանքները կտեւեն 5-6 ամիս»: Իսկ թե այդ ընթացքում ինչով են զբաղվելու թատրոնի ստեղծագործական կոլեկտիվները, տնօրենը նշեց, որ մեկ օր անգամ փորձասենյակներում չի դադարելու նվագախմբի, երգչախմբի, մեներգիչների ու բալետի արտիստների աշխատանքը, մանավանդ որ՝ պետպատվերի շրջանակներում ունեն օպերային եւ բալետային ներկայացումների պրեմիերաներ:

Կամո Հովհաննիսյանը թատերասերներին հանգստացրեց, ասելով, որ իրենք Երեւանում կխաղան այն թատրոններում, որոնց բեմերը հնարավորություն են տալիս օպերային եւ բալետային ներկայացումների՝ նշելով Սունդուկյանի անվան, Ռուսական դրամատիկական, Ամերիկյան համալսարանի եւ «Արամ Խաչատրյան» համերգասրահի բեմերը: Նա հավելեց նաեւ, որ նախնական պայմանավորվածություններ ունեն հանդես գալու Գյումրիում, Վանաձորում, Սպիտակում, Կապանում, նույնիսկ Մարզահամերգային համալիրի տնօրենի հետ պատրաստվում են իրականացնել համատեղ նախագիծ: Թատրոնի նվագախումբն ու երգչախումբն էլ հանդես կգան առանձին երեկոներով: Մեր զրուցակիցը հայտնեց նաեւ, որ հիմնանորոգման մեջ գտնվող Թբիլիսիի օպերայի եւ բալետի թատրոնի տնօրենը խոստացել է ամռանը Բաթումի օպերային թատրոնում կազմակերպել մեր թատրոնի հյուրախաղերը:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# Ինչու չի զարգանում դոկտորանտուրան

Արդեն մի քանի տարի է, ինչ խոսվում է մասնագիտական կրթության երրորդ աստիճանի՝ դոկտորանտուրայի կայացման մասին, սակայն խորհրդային ժամանակներից ժառանգած ասպիրանտուրան մեր հանրապետությունում դեռեւս չի ցանկանում նահանջել: Եվ պատճառը միայն այն չէ, որ մեր մի շարք բուհեր դեռեւս հստակ չեն պատկերացնում դոկտորանտուրայի իմաստը: Ստացվում է այնպես, որ ասպիրանտուրան հաճախ հարթակ է դառնում հեշտությամբ «տիրանալու» գիտության դափնիներին: Այստեղ պարզապես բացակայում է կրթությունը, գիտահետազոտական աշխատանք կատարելու լայն ոլորտը, գիտական գործընթացի կառավարմանը մասնակցությունը, եւ ասպիրանտը միայն հետազոտելով իրեն բաժին հասած նեղ թեման, սակավաթիվ որակավորման քննություններով ավարտում է ուսումը եւ պաշտպանելով ատենախոսություն՝ ձեռք է բերում գիտության թեկնածուի աստիճան: Առկա ասպիրանտների նման թերծանրաբեռնվածությունը բերում է նրան, որ ուսումնառությունը դառնում է ձեւական եւ անգամ՝ ձանձրալի:

Սերտ կապեր չունենալով հարազատ ամբիոնի հետ, ձեռք բերելով զորակոչային տարկետման իրավունք եւ ստանալով կրթաթոշակ, իրենց հիմնական գործը թողած, ասպիրանտները բուհից դուրս աշխատանք են փնտրում այլ կազմակերպություններում: Արդյունքում, ոչ միայն ընկնում է երիտասարդ գիտնականների պատրաստման որակը, այլեւ մեծ հարված է հասցվում գիտելիքահենք տնտեսության կայացմանն ու գիտելիքի առեւտրայնացմանը: Գիտության թեկնածուների աստիճանաշնորհման տարեցտարի աճող թվերը նույնպես համոզիչ չեն հանրապետությունում գիտության զարգացումը գնահատելիս: Աշխարհը փոխվել է, գիտությունը տեղափոխվել շուկայական հարաբերությունների ոլորտ:

Զարգացած շատ երկրներ, անգամ ունենալով հարուստ բյուջետային միջոցներ եւ գիտությունը պետական մակարդակով ֆինանսավորելու լայն հնարավորություններ, բավականին ինտենսիվորեն են զբաղվում գիտելիքի առեւտրայնացմամբ: Օրինակ՝ Միացյալ Նահանգներն այս ճանապարհով տարեկան 120 մլրդ դոլար է աշխատում, Անգլիան՝ մոտ 12 մլրդ ֆունտ ստեռլինգ: Իսկ ի՞նչ դիրքորոշմամբ ենք մենք այս հարցի շուրջ հանդես գալիս: Պարզապես նոստալգիկ հիշողություններով պարուրված դեպի Խորհրդային անցյալը, որտեղ գործում էր պետության կողմից ֆինանսավորվող գիտահետազոտական կազմակերպությունների գերհզոր ցանց, դեռեւս չենք կարողանում ընդունել, որ մեր համալսարանները պետք է այդ գործառույթներն իրականացնեն, որտեղ լուրջ դերակատարում է ունենալու դոկտորանտուրան: Եթե ասպիրանտի գործունեությունն ուսման տարիներին մինչ այժմ սահմանափակվում էր թեկնածուական քննություններով, հոդվածների հրապարակումներով եւ վերջնարդյունքում՝ ատենախոսության պաշտպանությամբ, ապա դրան հավելյալ՝ դոկտորանտուրայում սովորողը լուրջ մասնակցություն պետք է ցուցաբերի ակադեմիական ծրագրային կրեդիտների հետեւողական կուտակման, ինովացիոն ծրագրերի առեւտրայնացման, գիտական արդյունքների վաճառահանման շուկաների ուսումնասիրման, տեղական եւ միջազգային դրամաշնորհային աղբյուրների հայթայթման գործում: Եվ, վերջապես, գիտահետազոտական ուսուցումը պետք է բավարարի աշխատաշուկայի պահանջները, տալով այնպիսի շրջանավարտներ, որոնք պահանջարկ կունենան ներքին աշխատաշուկայում եւ ոչ թե կփորձեն իրենց նեռուժն օգտագործել արտասահմանում:

Այսպիսով, դոկտորանտուրայի կայացման շարժառիթները պետք է կապել ոչ թե Բոլոնիայի գործընթացի հետ, որն, ի դեպ, փորձում են անել կրթության ներկայիս կազմակերպիչներից շատ շատերը, այլ գիտելիքահենք տնտեսության կայացման պահանջի հետ, որի մանրամասն մեկնաբանությունները ներկայացված են պրոֆեսոր Ս. Երիցյանի եւ իմ կողմից համահեղինակած «Մասնագիտական կրթության մարտահրավերները. Բոլոնիայից Երեւան» գրքում:

ԱՐՄԵՆ ՃՈՒՂՈՒՐՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

### «Ռենեսանսը» կմեկնարկի երկուշաբթի

Ապրիլի 9-19-ը Գյումրիում կկայանա «Ռենեսանս» միջազգային մրցույթ-փառատոնը, որի շրջանակներում կանցկացվի նաեւ «Մշակութային երկխոսություն» խորագրով գիտաժողով:

Երեկ կայացած ասուլիսում մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը հայտնեց, թե փառատոնին կմասնակցի շուրջ 1365 երաժիշտ՝ 25 երկրից: Մեծ թվով հայտեր են ստացվել հատկապես «Ժողովրդական գործիքներ»՝ 266, «Կամերային համույթ» խմբի համար՝ 170 եւ «Դաշնակահար» խմբերի համար՝ 165: Նախարարը խոստացավ աջակցել նման նախաձեռնություններին, որոնք օգնում են պատանի տաղանդներին հասնել հաջողության: Երեւանի պետական կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճյուղի տնօրեն Կարինե Ավդալյանն էլ նշեց, որ այս տարի կլինի նաեւ կոմպոզիտոր Ալեքսանդր Հարությունյանի անվան հատուկ մրցանակ: «Ռենեսանս» միջազգային մրցույթ-փառատոնը, որի գլխավոր հովանավորն է «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերությունը, կընթանա Հայաստանի առաջին տիկին Ռիտա

# Թռչնասեր հաղթողները հայտնի են

Աշակերտների շրջանում հայրենագիտությանը նպաստելու նպատակով Հայաստանի բնության պետական թանգարանը եւ «Կրթություն» շաբաթաթերթը շարունակում են արդեն ավանդական դարձած վիկտորինա-մրցույթների կազմակերպումը: Օրերս կայացած հերթական վիկտորինան նվիրված էր Թռչունների միջազգային օրվան, հարցերն էլ վերաբերում էին Հայաստանում բնակվող գիշատիչ թռչուններին: Մրցույթին մասնակցել են հանրապետության 11 մարզերի շուրջ 60 դպրոցականներ, մասնակիցներից 9-ը պատասխանել են առաջադրված 12 հարցերին: Լավագույնները հրավիրվել էին թանգարան՝ մրցույթ-վիկտորինայի երկրորդ փուլին մասնակցելու համար:



Նրանց գնահատում էին բնապահպանության, գիտության եւ կրթության նախարարությունների, Ամերիկյան համալսարանի, Թռչունների պահպանության միության համապատասխան մասնագետները: Առաջին մրցանակը շնորհվեց Շահեն Վարոսյանին (Լոռու մարզ, գ. Սանահին, Միկոյանի միջ. դպրոց, 8-րդ դասարան), երկրորդ մրցանակը ստացավ Գագիկ Ամիրջանյանը (Արարատի մարզ, Արարատի Ժ. Մկրտչյանի N1 հիմնական դպրոց, 8-րդ դասարան), իսկ երրորդը՝ Դավիթ Առաքելյանը (Գեղարքունիքի մարզ, Կարմիր գյուղի N1 դպրոց, 10-րդ դասարան):

Ցավալի է, որ բնապահպանական այսպիսի միջոցառումներին գրեթե չեն մասնակցում Երեւան քաղաքի դպրոցները:

Ա. ԱԿՄԱԿՃՅԱՆ

### Մանկավարժականը «քիմիազերծվեց»

Մանկավարժական համալսարանն արդեն երկար տարիներ գտնվում էր քիմիական պայթյունավտանգ գոտում: Ըստ համալսարանից ստացված հաղորդագրության, բուհի քիմիական լաբորատորիայի նկուղում հիմնադրումից ի վեր կուտակվել էին խորհրդային տարիներից մնացած զանազան քիմիական նյութեր: Դրանց տարհանման եւ համալսարանի անվտանգության ապահովման գործում մանկավարժականին աջակցեց ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը: Նախարարության աշխատանքները ղեկավարում էր Բնակչության եւ տարածքային պաշտպանության վարչության պետ, գնդապետ Հովհաննես Եմիշյանը: Փրկարարները, պահպանելով անվտանգության բոլոր կանոնները, մի քանի ժամվա ընթացքում համալսարանի նկուղից հանեցին մեծ քանակությամբ քիմիական նյութեր: Կենսաբանության, քիմիայի եւ աշխարհագրության ֆակուլտետի դեկան, քիմիական գիտությունների թեկնածու, դոցենտ Սվետլանա Հովակիմյանը քիմիական նյութերի պահպանումը համալսարանում վտանգավոր է համարում: «Դրանց մի մասը իդենտիֆիկացված չէին, կային նաեւ ժամկետանց ու գործածությունից դուրս եկած նյութեր: Պահեստը տարիներ շարունակ տեղափոխվել է տեղից տեղ, որի հետեւանքով նյութերի մեծ մասը վնասվել էին: Այսօր այդ նյութերը գտնվում էին վթարային շենքում, ինչն ավելի էր մեծացնում վտանգը: Կարծում եմ՝ այս միջոցառումը նախաձեռնվեց ժամանակին»,- հայտնեց ֆակուլտետի դեկանը:

VivaCell MTS

ԵԶԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

# 2015-ի մեր նախապատրաստությունները սկսվեցին

Մոտենում ենք 1915թ. հարյուրամյակին: Թուրքական Հանրապետությունը, իր անձանցով ու կառույցներով հանդերձ, ազգային մոբիլիզացիայի նախապատրաստական խանդավառության մեջ է: Որոշվել է հիմնական թեման. «Հայկական ստերին մի տրվիր: Թուրքերը կաթից հանած սպիտակ գդալ են: Մենք նրանց ցեղասպանության չենք ենթարկել, այլ իրենք՝ մեզ»: Առաջին քայլն էլ արվեց «Խոջալուի ցեղասպանությամբ»: Այսուհետեւ ապացուցելու ենք, որ 1915թ. սպանվածները թուրքեր էին:

Մեր պետությունը, որ սրա նման հարցեր թուրքական ազգին ճշտապես մատնացույց է անում, սկսեց առաքելությունը, ինչպես գիտենք, փետրվարի 26-ին: Եղբայրական ադրբեջանական դրամագլխի հովանավորությամբ Թաքսիմում կազմակերպված «բիճերով» ցույցի ժամանակ մեր ներքին գործերի նախարարը, նահանգապետն ու անվտանգության պետը կողքին, բարձրացավ ամբիոնի մոտ ու ասաց, թե «Խոջալուի արյունը անպատասխան մնաց»: Իմամ-համայնքը գործընթացն սկսվեց:

Սակայն, ըստ էության, նախաձեռնող թուրքերը պետությունից նույնիսկ առաջ էին ընկել: «Ռադիքալ-2»-ում փետրվարի 12-ին գրել են, որ Գազիայնթեփում անշարժ գույքի մի վաճառող Սարկոզիի, Ֆրանսիայի, սփյուռքի ու ստամբուլահայ համայնքի հիմնադրամների դեմ դատական հայցով է հանդես եկել, այն մեղադրանքով, որ իր հոր պապին սպանել են հայերը: Այժմ էլ Ստամբուլի Մալթեփեյից մի «Թոշակի անցած հաշվապահ, բանկիր-լրագրող» 0216-457 9351 համարի ֆաքս/հեռախոսից սկսել է «Կոչ թուրքական հասարակությանը-1» վերտառությամբ մի տեղեկացում ուղարկելու արշավ: Կրկին «մենք չենք արել, իրենք են արել» թեման է, սակայն նորույթներ կան. «Վստահ ենք նաեւ, որ ֆինանսական աջակցություն կկարողանանք ստանալ... Եթե պետք լինի՝ կարող ենք մի կազմակերպություն բացել, պաշտոնապես էլ գրանցվել»: Այդ ֆինանսական աջակցությունը տեսնես որտեղի՞ց է ապահովելու:

## Ամենաառաջեւում են մեր համալսարանները

Մեր համալսարաններն ու համալսարանականները ազգային հարցերում միշտ էլ եղել են պետության կատարածուներն ու առաջամարտիկները: 1945թ. դեկտեմբերի 4-ին «Թան» տպագրատունը ավերվեց համալսարանի ուսանողների կողմից, ինչով լռեցվեցին կոմունիստները: Ստամբուլի համալսարանը Քենան Էվրենին 1982թ. տվեց «պատվավոր դոկտորի ու պատվավոր պրոֆեսորի» կոչում: 2005թ. մարտին քրդերին անվանելով «այսպես կոչված քաղաքացի»՝ քաղաքացիությունից զրկելու պոստ-մոդեռն ձեւ հորինած Գլխավոր սպայակույտին անմիջապես հայտարարությամբ աջակցողը Անկարայի համալսարանն էր: Սակայն «ամենահամաձայնեցված» ազգային ճիգն էր, որ 2008թ. դեկտեմբերին Հայերից ներողություն խնդրելու արշավի սկզբում եղավ: Աթաթյուրքի, Սաքարիայի ու Ստամբուլի համալսարանները տարածեցին «Սա դավաճանություն է մեր սուրբ նահատակների նկատմամբ» հայտարարությունը (Վ. Զոշքուն, Թարաֆ, 26.12.08): Նոր աշխարհազորում նույնպես մեր համալսարաններն ամենաառաջեւում են.

1) Փետրվարի 26-ին Սպարտայի Ս. Դեմիրելի անվան համալսարանի կողմից կազմակերպված ցույցի ժամանակ Ադրբեջանի քաղաքացի, պրոֆ. Աբդուլահ Աեւը ելույթ ունեցավ ուսանողների համար. «Թուրք ազգը աշխարհի ոչ մի ծայրում մարդկության կողմից ամոթանքի ենթակա ոչ մի բան չի արել: Քանի դեռ թուրք ազգը գոյություն ունի, պետք է Խոջալուում թափված արյան հաշիվը պահանջի»: Դրանից հետո նա բոլորին հրավիրեց պառկել գետնին: Դուդուկի ձայնի ներքո ուսանողները պառկեցին: Որոշ ժամանակ անց կրկին դուդուկի ձայնով նրանք վեր կացան ու «Խոջալուն թուրքական է՝ թուրքական կմնա, Արարատը ձեզ գերեզման կդառնա» կարգախոսը բացականչելով՝



ցրվեցին («Ռադիքալ», 27.02.12):

2) Աֆիոն Քոջաթեփեի համալսարանում ուսանողները կազմակերպել էին Պատմական ակումբի հանդիպում (Աֆիոնի լուրերի կայք, 09.03.12): Դոցենտ Գյուրսոյ Շահինի ելույթի իմաստը հետեւյալում է. «Հայերը ամեն իմաստով թուրքերին են նմանակել ու նմանվել: Սակայն որոշ ժամանակ հետո նրանց միջեւ սեւ կատու է անցել»: Այստեղի սեւ կատուն սվազցի Մխիթարն է եղել: Վենետիկ է գնացել, այնտեղ Սուրբ Ղազար կղզում Մխիթարյան միաբանություն է հիմնել, դարձել է հայ ազգայնականության կենտրոնը:

## 1676թ. ծնված կատվին ո՞վ գերեզմանից հանեց

Լավ, 1862թ. Զեյթունի ապստամբությունը Անատոլիայում հայերի առաջին գործողությունն էր: Հասկանում ենք, որ դոցենտ Շահինը շատ չի մտածել, թե 1676թ. ծնված «սվազցի սեւ կատուն» ինչպե՞ս կարողացավ բարդել Հայկական հարցը օսմանցիների վրա: Մտածելը երեւի թե բարդ էր, քանի որ Թուրքիայում համալսարանների կողմից ստեղծված մտածելակերպի համաձայն կան միայն «արտաքին միջամտությունները» ու «միսիոներական գործունեությունը»: Դոցենտ Շահինն էլ «ներքին դինամիկայի» մասին բան չի լսել:

1847թ. Միր Բեդիրհանի պարտությունից հետո քրդերն այսօրվա հարավ-արեւելյան շրջանում մնացին առանց առաջնորդի: Այդժամ, սկսեցին մորթել հայերին, այսինքն՝ «ոսկե ձու բերող հավերին», ովքեր զբաղվում էին արհեստներով ու առեւտրով եւ վաղ ժամանակներից տարեկան հարկ էին մուծում: Դրանից հետո, 1859թ. Շեյխ Շամիլի՝ ռուսներին պարտվելուց հետո Անատոլիա փախած կովկասյան ժողովուրդները փողերը կշտացնելու համար կրկին նեղում են հայերին: Նեղված հայերը քանիցս դիմում են Ստամբուլ: Ստամբուլը բանի տեղ չի դնում: Արդյունքում, հայ երիտասարդները հիմնում են հեղափոխական կուսակցություններ ու ակնկալում Արեւմուտքի եւ Ռուսաստանի աջակցությունը...

Գոնե մինչեւ 1847թ. Անատոլիայում մուսուլմաններն ու հայերը ոնց էլ լինի առանց վեճի ապրել են. թե ինչպե՞ս 1676թ. ծնված «սեւ կատուն» մտավ այս ժողովուրդների արանքը, ոնց հասկացանք՝ դոցենտ Շահինի ուշադրությունը չի գրավել: Իհարկե, այն, թե 19-րդ դարում ի հայտ եկած ազգայնականությունը ոնց հայտնվեց 17-րդ դարում ծնված Մխիթարի մոտ՝ ընդհանրապես ուրիշ (իսկ երիտասարդ գիտնականի համար արտակարգ ահավոր) մի պատմություն է: Միայն Աստված գիտի, թե ինչպես կարող է այսպիսի գիտություն գոյություն ունենալ:

Իրենից հետո ելույթ ունեցող դոցենտ Ահմեդ Ալթընթաշն էլ մի նոր թեզ առաջ քաշեց. Օսմանյան կայսրությունում ֆրանսերենի՝ դիվանագիտական լեզու լինելը նրանից է, որ Ֆրանսիան միջամտում էր օսմանյան պաշտոնական գրագրություններին: Վերջում ամբիոնի մոտ եկած պրոֆեսոր Սադըք Սարըսամանը խնդիրը շատ ավելի պարզ կերպով սահմանեց. «Կարող եմ շատ հստակ ասել, որ իրականում ցեղասպանությանը թուրք ազգն է ենթարկվել: Ըստ ձեզ՝ մենք Բալկաններից մեր ցանկությա՞մբ հետ քաշվեցինք»: Նրա ասածներից, որքան ես եմ հասկացել, նվազագույնը երկու արդյունք կարելի է ստանալ. ա) Այն, որ օսմանցիները Բալկաններում գրաված հողերից որոշ ժամանակ անց ստիպված են եղել հետ քաշվել, ըստ էության, թուրքերի հանդեպ ցեղասպանություն է, բ) այս ցեղասպանությունը հավասարազոր է Միջին Ասիայից եկած թուրքերի կողմից Անատոլիայի ավտոխտոն (տեղաբնակ) ժողովուրդ հանդիսացող հայերին վերացնելուն:

## Եթե ցեղասպանություն անեինք

3) Քյութահիայի Դումլուփընար համալսարանում կազմակերպված կոնֆերանսի ժամանակ (Անադոլու գործակալություն, 10.03.12) պրոֆ. Յուսուֆ Հալաչօղլուն հայտարարեց, թե «Հայ հրոսակախմբերը սպանել են 518 000 մուսուլման»: Հնարավոր է, որ նրա կողմից «թվերի ընկալումը» մի քիչ տարբեր լինի, քանի որ Թ. Աքյոլին տված հարցազրույցում (CNN Tfrk, 10.11.09) նա նշել է տեղահանված հայերի «հստակ թիվը»՝ 438 758: Այս դեպքում Հալաչօղլուն «Թալեաթ փաշայից կրկնակի անգամ ավելի թալեաթ-փաշայական» է դառնում, որովհետեւ Մուրադ Բարդաքչըի կողմից հրատարակված հենց փաշայի հատուկ տետրակում տեղահանվածների թիվը նշվում է որպես 925 հազար՝ այն էլ առանց Թրակիայի (եվրոպական մասին՝ ծնթ. թարգմանչի):

7) Էրզրումի Աթաթյուրքի համալսարանը մարտի 12-ին կազմակերպեց մի կոնֆերանս (Աֆիոնի լուրերի կայք, 09.03.12), որի ժամանակ դոցենտ Էրոլ Քյուրքչյուօղլուն ասաց. «Թուրքերի հանդեպ ցեղասպանությունը պատմական զրպարտությամբ ու զեղծարարությամբ շրջվելով դարձվել է հայերի ցեղասպանություն» ու ավելացրեց հայտնի (ու խրատական) մի խոսք. «Եթե պատմության մեջ թուրք պետությունը ցեղասպանություն ու ձուլում իրականացրած լիներ, ապա այսօր շատ պետություններ ու ազգեր, մասնավորապես Հայաստանը, գոյություն չէին ունենա»:

Հետաքրքրությամբ կշարունակենք հետեւել մեր համալսարանների ազգանվեր գործունեությանը:

ԲԱՍՔԸՆ ՕՐԱՆ
Թուրքիա

# ԱՄՆ-ն եւ Իսրայելը սթրեսի են ենթարկում Ադրբեջանին

Ամերիկյան Foreign Policy հեղինակավոր պարբերականի վերջերս հրապարակած նյութը առ այն, թե Իսրայելն Իրանի վրա հարձակում նախապատրաստելու համար Ադրբեջանում ռազմական օդանավակայանների օգտագործման իրավունք է ստացել, դարձել է իսկական գլխացավանք՝ առաջին հերթին հենց Ադրբեջանի համար: Խնդիրն այնքան է աղմուկ բարձրացրել, որ քիչ է մնում վերաճի իսկական միջազգային սկանդալի: Հոդվածագիր Մարք Փերրին, հղում կատարելով Օբամայի վարչակազմի այն բարձրաստիճան պաշտոնյաներին, ովքեր տրամադրել են այս տեղեկատվությունը, գրել է նաեւ, որ երեւույթը հետախուզական ծառայությունների աշխատակիցների շրջանում աճող անհանգստություն է հարուցում, քանի որ Իսրայելի ռազմական էքսպանսիան Ադրբեջանում բարդացնում է Իսրայելի եւ Իրանի միջեւ լարվածությունը նվազեցնելուն ուղղված ԱՄՆ-ի ջանքերը: Սրա վերաբերյալ պաշտոնական մեկնաբանություններ է արդեն հասցրել տալ ԱՄՆ պետդեպարտամենտի մամուլի ծառայությունը՝ հերքելով նման տեղեկատվության իսկությունը, իսկ Օբամայի վարչակարգի որոշ ընդդիմադիրներ Հանրապետական կուսակցությունից Foreign Policy-ի հոդվածը որակել են որպես Սպիտակ տան կողմից կազմակերպված տեղեկատվության գիտակցված արտահոսք: Հարցազրույց տալով Fox News-ին՝ մեկնաբանությամբ է հանդես եկել նույնիսկ ՄԱԿ-ում ԱՄՆ նախկին դեսպան Ջոն Բոլթոնը՝ որակելով եղածը որպես Իսրայելի հանդեպ իրականացված սաբոտաժ: Ինչեւէ, առաջին հայացքից խնդիրն ուսումնասիրելիս, կարծես, սա ավելի շուտ ԱՄՆ-ի եւ Իսրայելի միջեւ ինչ-որ անհամաձայնության կամ էլ տարաձայնության արդյունք է՝ կապված Իրանի հետ, եւ ԱՄՆ-ն ամեն կերպ փորձում է ձախողել Իսրայելի կողմից նախաձեռնած ինքնուրույն քայլերը: Սակայն, ինչպես ասում են՝ պարանը միշտ էլ բարակ տեղից է կտրվում եւ այս դեպքում կարծես այդ բարակ պարանը Ադրբեջանն է, եւ ամենակարեւորն էլ հենց այն է, որ վերջինս շատ լավ դա հասկանում է:

Մի քանի օր է՝ ինչ ամբողջ Ադրբեջանում մեծից փոքր հանդես են գալիս տարատեսակ մեկնաբանություններով եւ փորձում են հերքել նման պայմանավորվածության առկայությունը՝ նման տեղեկատվության տարածումը բարդելով «երրորդ» կողմի վրա: Ադրբեջանցիների հերքման հիմնական փաստարկը հանդիսանում է վերջերս Թուրքիայի, Ադրբեջանի եւ Իրանի արտգործնախարարների կողմից Նախիջեւանում ընդունած հռչակագիրը՝ ինչ-որ «բարեկամության» եւ նմանատիպ այլ ֆարսի վերաբերյալ, ինչպես նաեւ Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիեւի՝ երկու շաբաթ առաջ կատարած այցը Իրան, որը բառացիորեն ոչ մի նշանակալի նպատակ չէր հետապնդում, քանի որ ոչ մի նշանակալի բան պարզապես չգրանցվեց:

Գիտեք ինչ, հռչակագրերով եւ նմանատիպ այլ քաղաքական տարրական ժեստերով իրական բարեկամության հասնել՝ գործնականում հնարավոր չէ: Պատմությունը շատ անգամ է ապացուցել, որ նման բաները չեն կարող գործել երկարատեւ հեռանկարում, քանի առկան են կոնկրետ, ոչ ավել, ոչ պակաս, քան ազգային, իսկ այս դեպքում՝ պետական շահերի բախումներ:

Ադրբեջանն անկախությունից ի վեր փորձում է սադրել Իրանի հյուսիսում անջատողական տրամադրությունները եւ նույնիսկ 1990-ականների սկզբներին Ադրբեջանի եւ Իրանի միջեւ կար պատերազմի սկսման ռեալ վտանգ, Ադրբեջանի ազգայնամոլ եւ իրեն Աթաթուրք երեւակայող նախագահի Աբուլֆազ Էլչիբեյի օրոք:

Դժվար չէ պատկերացնել, որ Իսրայելը իր հերթին կարող էր խոստացած լինել Ադրբեջանին իր «աջակցությունը»՝ կապված «Հարավային Ադրբեջանի» հետ եւ դեռ մի բան էլ ԱՄՆ-ի հովանավորությունը «Իրանյան խնդրի» լուծման լայն համատեքստում: Բայց ով կմտածեր, որ Ադրբեջանին կարող էին այնպես նեղը գցել, որ ազգովի սկսեին մահապատժի դատապարտված հանցագործի նման արդարանալ կախաղանի ճանապարհին: Մի բան շատ հստակ է. ծուխն առանց կրակ չի լինում: ԱՄՆ-ն եւ Իսրայելը իրենց խնդիրների լուծման ուղղությամբ ինչ-որ նրբերանգներ չեն կիսում, իսկ այդ նրբերանգները մի ամբողջ ժողովրդի սթրեսի են ենթարկում: Ինչեւէ, գործելուց առաջ մտածել է պետք եւ պետք է հասկանալ, որ ոտքը վերմակից երկար մեկնելուց կարելի է եւ մրսել:

ԷՐԻԿ ԵՐԻՑՅԱՆ